

Եւ ըզբեզ ի՛նք պահեցի, նա շողոյն ցրտոյն ժամեցի,
Այլոց նազելի ցուպի, միթէ ա՛յս առաքս պահեցի օ
Ո՛վ Մայր Աստուծոյ Բանին, դու միջնորդ եւ մարդկան
ազգի,
Իմ որդեակս ի քեզ յանձին, պըսկալց արա՛ւ արժանի ։

Հայս իբրտ քի մեռեալն կ'ստե

Այ խնցի ողորմած մարիկ, քանի՛ լսա ողորմ առ գերի,
Դե՛նա հիմեր տուր սրտիդ, Թէ չէ քեզ դիտար կու լինի,
Բայց եւ աղաբեմ ըզբեզ, հարազատ մարիկ ցանկալի,
Բանիկ մի խնդրեմ ի քէն, Թէ խօսկունքս քեզ ան-
ցանի ։
Հաղքատս եւ զօտարս երկրի կերակրես անմահմար-
նալի,
Եւ տրոք ողորմութեան տաս լիշել ի պատարագի ։
Յոյս զԱստուածածին ունիմք, բարեխօս է նա մեզ բարի,
Ըզիւր միածին Որդին աղաչէ որ մեզ ողորմի ։



ՕՍՏ. ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՎԱՅԵՐԸ

Երբ Թրքահայ հասարակութեան մէջ տա-
մանադրական բեժմի մը հաստատումէն տաս-
տասներեք տարի յետոյ, մեր Ազգային Սահմա-
նադրութեան հիմնադիրներէն մէկուն՝ Գրիգոր
Օտեանի՝ կարեւոր աշակցութեամբ, Միտանթ
փաշա փորձեց եւ յաջողեցաւ Օսմանեան Պե-
տութեան միապետական կառավարութիւնը փո-
խել սահմանադրականի, Հայերը, որ միշտ ցան-
կացող եւ օժանդակ եղած են իրենց բնակակից
ազգերու յառաջդիմութեան, արտակարգ ուրա-
խութեամբ ողջունեցին Օսմանեան Սահմանադ-
րութեան հաստատումը, անոր մէջ յուսալով
գտնել ամբողջ երկրին այլ եւս անարգել յառաջ-
խաղացութիւնը դէպ ի ազատ Քաղաքակրթու-
թիւնը, ու նոյն ատեն իրենց մասնաւոր ցաւե-
րուն դարձան բերող նոր թուականի մը բա-
ցումը ։

Տաճկահայ մամուլը այդ միջոցին խանդա-
վառ յողուածներով լեցուն է եղած՝ ի պատիւ
Օսմ. Սահմանադրութեան ։ Մեր վարդապետ-
նապետից Թովմաս Թերզեանը հետեւեալ զեր-
թուածին մէջ (Մայիս, 1876, թիւ 1847) նուրբ
ու ընդու առողերով հայկական հրճուանքը եր-
գած եւ մեծարանքի զերթողական հարկ մը
մատուցած է Թուրք վերանորոգչին ։

ԱՌ ԱԶԱՏԱՐԱՐՆ

Միտամ՝ Գրումէլ մըտոք՝ հողով Ուօշինգոն՝
Ջոր լուսաւոր աշխարհիս՝ քորք երկնային՝
ձնարարութիւն՝ Է ապտումիւն՝ Յամանեան
Անդեղակոր գահուն պատուար կանգնեցին ։

Ինձ՝ ինքնանուէր Գրմիս ամեն իրաւունքս,
Ոչ անտարբեր բընա անուն քո հընչեց ։
Քեզի յետրեան ուղիից ցնիբատն յորձանուս
Քո լուսափիւռ շուգէդ իմ սիրտս ուղեկեց ։

Տեսայ զքեզ՝ յայդ արգարութեան շանձ՝ յանեալ
Ջան՝ յառաջիւ Է — Քոյին ճակուղ տակամած,
Շողոք արձակէր յոյս ։ — Ի՛ ի մեծին Նըպատակ
Վերականգման հայրենեաց՝ էր աչքդ յառած ։

Հիւսիսաշուշն Թէպէտ մըրիկք յազէին
Ջնքոյ շուսեալ ի գըրգնեյ չակային
Արեւիցք՝ ու ապտունականք յաժէին
Մեռելագոմ ձիւադք՝ վիժման Անցեալին՝

Անցան համար զլլով շափ վեր ։ զու գըրիկ
Փարսեցիր եւ զսին ուրուս, և բացաւ
Շունչ քո շիրմաց ըզկափարիւս ի նոր կեանս ։
Նոճեաց մէջէն մարին անդրէն ցուցաւ ։

Թող քո արդիւնքն իսկ բեզ ըլլան մրցանակ,
Եւ նըման երբս ինքնարոյս մէկ ծաղիկ,
Ջոր ժընցոյց արփենի շող մը մըրած
Ի զար զաւար լերանցանէ ձըմակ ։

Թ. ԹԵՐԶԵԱՆ

Յունիս 29/11 Յուլիս

Ու մեր կրթիւնի Հայրիկը հրատարակած է
Ժամանակ եւ Խորհուրդ տխուրոտով զըզոյկ մը,
ուր գուրգուրանքով, յափտակութեամբ կը
տարաբովոր Օսմ. Սահմանադրութեամբ բացուած
դարաշրջանը ։

« . . . Հասա՛ւ, հասա՛ւ այն ազատարեր
ժամանակ . զեզ աւետիս կուտամ, ժողովուրդ,
լուծ լեղուզ եւ փակուած բերանդ բա՛ց այ-
սուհեանեան, խօսի՛ր եւ գրէ՛ որչափ սահմանադր-
Օրէնք քեզ ազատութիւն կուտայ . խօսի՛ր երբ
կը զրկուին, խօսի՛ր դատաւարաց առաջ երբ
ապիբատ ձեռք զքեզ կ'ապտակեն, խօսի՛ր եւ
իրաւունք խնդրէ՛ . . . »

« Ո՛վ բարեգուշակ ժամանակ, զու բարի
եկիր մեր այլախօս . զեզ կ'անկեալէր եւ կ'սպա-
սէր Թուրքաւստանի հինաւուրց Մայր, որ ամուշ
էր եւ հրայիւնք ծնաւ. ցաւ երկունք կալաւ զինքն

իրեն Ժննդականի, երկնեց երկնեց եւ այսօր
Ժնաւ մեզ համար մի նոր մանուկ՝ Սամանադ-
րութիւնն ծննացէք, ստորակ ժողովուրդ, ճնծա-
ցէք, եւ ողունեցէք այս նորամիտ մանուկ, եւ
միանգամայն աղօթեցէք որ կայտառ մնայ, ապ-
րի, զօրանայ եւ զարգանայ ի կատարեալ հասակ
« . . . Ահաւասիկ այդ զարգացած Մանուկն
է որ Եւրօպոյի քաղաքակրթութիւն կը ներ-
մուծէ մեր հին աշխարհ, հին ժողովուրդ նոր
օրէնքով կը վերանորոգի եւ Օսմանեան կայս-
րութեան տան ազատ գաւազան յայնժամ ստե-
մանադրական թագով կը փառաւորի : »

Բայց այդ բոլոր խանգավառութիւնը յան-
գեանս զժողգրքար անողորմ յուսալարութեան
մի, իրիկեան իր քնարերգական աւելին մէջէն՝
արդէն իսկ կաակածանքի ու երկիւղի նօթ մը
սպրդեցուցած էր մէկ քանի հասուածներու մէջ :

« . . . Ո՛վ գուժ որ նորածին Սամանադ-
րութեան իրեն իմաստեղ զայեակ կը հանդի-
սանաք աշխարհի առաջ, աւագ աչքով հսկեցէք
այդ մանկան վերայ, պինդ գրկեցէք եւ գուր-
գուրալով պատսպարեցէք զինքն որ ստանձան-
եաց հովէն չգողայ եւ հարաւոյ կիզիչ արեւէն
չապգնապի :

« Եւ գիտէ՞ք ու կը տեսնէ՞ք քաջ որ թէ՛
օտար ու թէ՛ նոյն իսկ մեր աշխարհին մէջ գորա
թշնամիներ շատ կան, որ կը չըլին ամենու-
րէք, Գուցէ դարան գործեն տգէտ ու խաւարա-
գնաց մարդիկ, անտեսանելի մթութեան մէջ
գողանալ այդ մեր սիրական մանուկ եւ կամ ան-
դէն իւր խանձարութիւն մէջ ճնշելով ու նեղելով
իւնդին : Եւ ի՞նչ կը լինի յայնժամ, գիտէ՞ք
գութ, ո՛հ, Յետին չար քան զառաքին . . . »

Իսկապէս ալ, Սամանադրութիւնը, ար-
ուեստականօրէն զետեղուած՝ քանի մը յառա-
ջադէմ խիզախ եւ ազնիւ մտքերու բարի կամե-
ցողութեամբ միայն՝ դեռ ստուար մեծամաս-
նութեամբ անպատրաստ հասարակութեան մը
խախտ հիմունքին վրայ, շուտով փուռ ու
իրեն յայրորդեց բեծիմ մը աւելի բռնապետական,
աւելի վայրագ, կործանարար ու մռայլ քան
եղբէք եղած ըլլար հին բեծիմ Օսմ. Պետու-
թեան մէջ :

Այսօր, Սամանադրութիւնը կը հիմնուի
աւելի լուրջ պայմաններու մէջ : Օսմ. Պետու-
թեան ժողովուրդներուն մեծագոյն մասը շատ
աւելի հասուն է այժմ զայն ըմբռնելու, պահ-
պանելու եւ նոյն իսկ անոր աւելի լայն ու ա-
զատ ձեւ մը տալու համար : Ազատութեան ծա-
րար եւ ազգասիրութեան ձգտումը տասն ան-
գամ աւելի զօրացած են այն ցեղերուն մէջ ուր
արդէն իսկ գոյութիւն ունէին եւ թափանցած
ամրացած են միւս ցեղերէն շատերուն ալ մէջ :
Այլպանացիք կը ցանկան ալպանական լեզու,
գրականութիւն ծաղկեցնել, ազգայնութիւն մը
ձեւացնել : Արաբները տարբերէ ի վեր կը մա-
քառին՝ իրենց ցեղային ինքնութիւնը պաշտպա-
նելու համար : ու թուրք նոր սերունդները,
Տառապանքի մեծ ու բարեբար զարոյցն մէջ
վերանորոգուած ու եւրոպական ազատ ըմբռ-
նումներով տողորուած, կ'ուզեն Օսմանեան
Պետութեան մէջ հաստատել բեծիմ մը իսկապէս
ազատական՝ եւրոպական քաղաքակրթութեան
պահանջներուն համաձայն : Ինչքան ալ հակա-
օսկան թուին այլազան ցեղերու ձգտումները,
այդ հակասութիւնները կը հաշտուին այդ ձրգ-
տումներուն հիմքը կազմող էական զգացման
մէջ, որ է մաքուր ըղձանք մը դէպ ի Ազա-
տութիւն կը բաւէ որ այդ Ազատասիրութիւնը
մնայ անեղծ ու տաք իր մաքրութեան մէջ, եւ
Օսմանեան նոր ինքնորարար պիտի յաղդի
գործնականապէս ներդաշնակել այդ մասնական
հակասութիւնները, ու ամէն անհատի՝ ինչպէս
ցեղային անհատականութեան՝ իրաւունքները
ճանչնալով ու ապահովելով՝ դարձնել Օս-
մանեան Պետութիւնը մեծ Տուն մը՝ հաւաքե-
տական, ուր մէկէ աւելի ընտանիքներ համա-
խմբուած են, իւրաքանչիւրը իր ուրոյն նկարա-
գիրն ու անհատականութիւնը պահպանելով, ա-
մենք սիրով կապուած հանրապետական Տանը
ընդհանուր Շահերուն :

Փարիզ, Սեպտեմբեր, 1908



Le Gérant : FRÉDÉRIC MACLER
Imp. D. DOGHAMADJIAN
18, Rue des Gobelins, Paris.